



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԱ. — ՇՐՋՍՆ ԻԱ. 1889

ՏԱՐԻ ԻԲ. ՆՈՅՆՄ. 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀՆԱՂԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

« Իրրև զորդիս Հնաղանդութեան » (Ա. Պետր. Ա. 14):

Այս խօսքերում Ս. Առաքելայր քրիստոնէական կեանքի հիմք՝
 Հնաղանդութիւնն է ընդունում և պարզ ու յստակ կերպով
 որոշում է՝ անուանելով նրան որդիական Հնաղանդութիւն:
 Մենք այստեղ երկու հարց ենք յառաջ բերում. նախ՝ կքնենք
 քրիստոնէական Հնաղանդութեան պատճառները և ապա նրա



Հիմունքները, և ի վերջոյ, ցոյց կուտանք նրա ազդեցութիւնը կիսանքի վրայ:

Ի՞նչ պատճառաւ մե՛ք պէտք է հնազանդինք: Առ այդ ես կարող էի ձեզ պատասխանել այսպէս՝ մե՛ք պէտք է, նախ և առաջ, հնազանդենք մյն պատճառաւ, որովհետեւ հնազանդութիւնը աստուածագիր և ընդհանուր օրէնք է—օրէնք, որից ո՛չ մի արարած չէ կարող խուսափիլ: Իմ բանականութիւնը ինձ ասում է, որ ստեղծուած և կախում ունեցող էակը՝ պէտք է հնազանդի իւր Ստեղծողին: Եւ փորձը, արդարեւ, ինձ ապացուցանում է, որ երկրիս վրայ ո՛չ մի էակ չկայ, որ հնազանդութեան ենթակայ չլինի: Յոյց տուէք երկրիս վրայ մի արարած, որ ազատ լինի հնազանդութիւնից: Նիւթական աշխարհում դուք ո՛չ մի հիւլէ (ատոմ) չէք գտնի, որ իւր գոյութեան ամէն մի բոպէում՝ բնութեան այս կամ այն օրէնքին չհնազանդի և նրանով չը կառավարուի: Ի հակառակ դէպս՝ աշխարհս մի խօսս կը դաւնար: Մի և նոյն բանը մե՛ք տեսնում ենք և մարդկային ընկերականութեան մեջ: Եւ եթէ այդ ընկերականութիւնը տակաւին գոյութիւն ունի—դա միմիայն ի շնորհս առանձնական և մասնաւոր հնազանդութեանց այն գեղեցիկ համաձայնութեանն է, որով ամէն բան ներգաշնակաւորում է: Այլ և այլ գաղափարներ, ինչպէս են, զորօրինակ, ոյժը, կարիքը, բնազդումն, օգուտ, քաղաքային օրէնք, պատիւ, ինքնատիրութիւն, բարոյական օրէնք, և այլն, այն շարժիչ զօրութիւնները (ինչի՞ չասենք հրամայողները) են, որոց ամէն ղք հնազանդում է: Հնազանդում են՝ երբ հասարակական սանդխի պատուանդանի մօտ կամ ստորին աստիճաններումն են,—(արդեօք հարկաւոր է միթէ ցոյց տալ թէ ինչպէս), հնազանդում են՝ երբ այդ սանդխի վերին աստիճաններումն են: Եւ որքան շատ են բարձրանում, այնքան աւելի պատասխանատուութեան են ստանձնում: Իսկ ո՞ր էակը պատասխանատու է լինում, եթէ որ նա, մի և նոյն ժամանակ, հնազանդուելու հարկադրուած չէ: Հնազանդութեան այս օրէնքը այն աստիճան պարտագիր է, որ ոչ ղք կարող չէ նրանում բացառութիւն կազմել: Ներկայաց-

նենք մեզ մի մարդ, որ այդ օրէնքից ազատուելու փորձ է անում: Պարտքը նրան ճնշում է, ուրիշին պարտական մնալու միայնը՝ նրան անտանելի է, անկախութեամբ գրուեալ չէ նա հին ճանապարհից դուրս գալ է ուզում. ուզում է ինքնիշխան լինել և իւր կամքը առաջ տանել: Նա իրան ազատ և անկախ է համարում—առանց գիտնալու որ ինքը, գուցէ, արդէն գերի է դարձել այն կարծիքին, որին ինքը արհամարհում է, և թէ ինքը միմիայն փայլելու ձգտումով աշխատում է ստորացնել այդ կարծիքը:—Ննթագրենք, սակայն, որ այդ մարդը ծանր բռնից խոյս առեց: Այժմ գնանք այդ մարդու քամակից, —այդ մարդու, որ ամէն պարտականութիւններից իրան ազատ համարեց, որ բարձրաբարբառ կերպով իւր անկախութիւնը հրատարակեց: Ո՛հ, հազիւ թէ նա իւր ընտրած ճանապարհով մի քանի քայլ արաւ, և ահա նրա հանդէպ կանգնում է ցանկութիւնը և ասում «հեռեւիւր ինձ»: Եւ մարդը հեռեւում է: «Խոնարհիւր ինձ»: Եւ մարդը խոնարհում է:—«Ստորացիւր»: Եւ մարդը ստորանում է: Եւ այսպէս, երբ ցանկութիւնը ստիպելով մարդուն գնալ իւր չուզած ճանապարհով խորտակում է նրա եռանդը և թուլացնում նրա կամքը, —այն ժամանակ միայն այդ մարդը կտեսնի, որ ինքը կատարեալ գերի է դարձել: Եւ փոխանակ իւր պարտականութեանց հնազանդելու՝ կամաւորապէս ստրկացել է իւր այս կամ այն ցանկութեանը:

Այսպէս, ահա, Աստուածային օրէնքները չեն անհետանում, չեն ոչնչանում, այլ, ազան կամ անազան, կը պատժեն իրանց զանց առնողներին և մոռացողներին: Եւ Աստուած մարդը ստեղծելիս՝ մեզ բոլորիս հրամայեց հնազանդիւ: Եւ մեր հնազանդութիւնը նախ և առաջ և անմիջապէս դէպ ի նա պիտի լինի: Այսպիսով միայն ընդհանուր ներդաշնակութիւնը տեղի կունենայ և կիշխէ:

Մեղանչելով՝ խանգարեց մարդը այդ ներդաշնակութիւնը, քայց Աստուծուց հրաժարուելով՝ նա չկարողացաւ հնազանդութիւնից ևս հրաժարուիլ: Նա միայն իւր հրամայողին փոխեց: Ոմանք մարդկանցից, կարծես կենդանեաց նմանելով,

Հնազանդում են քաղցից կամ կարիքից հարկադրուած՝ քաղցը կամ ցուրտը նրանց ասում է՝ «աշխատեցէք», եւ նրանք աշխատում են: Ոյժը նրանց ասում է՝ «հնազանդեցէք կարգ կանոնին»: եւ նրանք հնազանդում են: Ուրիշները՝ աւելի զարգացածները՝ հնազանդում են ուրիշների կարծեաց՝ այս եւ այն գործը կատարելով ըստ վճռոյ այլոց:—վճիռ, որով անշուշտ այդ գործը պէտք է որ կատարուի:—Այսպիսի հայեացքով կարելի է պատիւն էլ համարել հնազանդութեան զօրեղ պատճառներից մէկը:

Այդ տեսակ մարդիկներից զատ՝ կան նաև այնպիսիք, որոնք պարտքի գերի են: Բայց առանց Աստուծոյ պարտք չկայ: Նա է՝ որ սահմանել է սրտաբք եւ պատուիրել է հնազանդիլ նորան: Ի հակառակ դէպո՝ նա—Աստուած՝ կաւէ սոսների վրայ հանգչող մի փառաւոր սղինձեայ կուռք կը դառնար:

Վերջապէս բարոյական աշխարհի աւելի բարձր մակերևոյթի վրայ կանգնած այնպիսի մարդիկ էլ կան, որոնք հնազանդում են ողորմածութիւնից շարժուած:— Բայց ի՞նչ բան է ողորմածութիւնը, եթէ որ ամենաբարի Աստուծուց չէ բրդխում: Միմիայն քրիստոնեան է, որ հնազանդում է նրան, որ է ճշմարտութիւն, բարութիւն եւ սէր:— Ահաւասիկ, եղբայր, ձեր առաւելութիւնը: Ի՞նչ ցանկութեանց, կռոց կամ անշունչ վերացականութեան չէք ծառայում, այլ անմիջապէս—Աստուծոյ: Ի՞նչ էք, որ, որպէս բանական արարածներ, ձեր գոյութեան իսկական նպատակին էք հասնում, վասն զի դուք համապատասխանում էք այն դիտաւորութեանը, որ ունէր Ստեղծողը, երկրիս վրայ տեղ տալով ձեզի: Աստուած իւր նիւթական արարածը կամեցաւ պսակել. արդէն շատ արարածներ, անխուտափելի օրինաց զօրութեամբ, նրան հնազանդում էին: Նրան հարկաւոր էր մի այնպիսի արարած, որ Իւր սիրոյն ազատակամ կերպով համապատասխանէր եւ որ ազատակամութեամբ նրա կամքը կատարէր:— եւ քրիստոնէի վիճութիւնը նրանումն է, որ Աստուծոյ հէնց այս դիտաւորութեանն է համապատասխանում: եւ ահա թէ քրիստոնեայ հոգին ինչի՞ առաւել է քան բոլոր աշխարհները,— եւ այն աշ-

խարհները, որոնց փոշիների նման Աստուած ցրուել է անաս-
ման երկնքում: Այդ աշխարհները հնազանդում են անխու-
տափելի օրինաց, մինչդեռ քրիստոնեան հնազանդում է նրան,
Որին սիրում է: Ասելով որ դուք ստեղծուած էք հնազանդու-
թեան համար՝ ես ձեզ յիշեցնում եմ՝ ձեր հակամիտութիւնը
դէպի վեհութիւնն ու փառաւորութիւնը: Ո՛հ, որքան ցան-
կալի էր ինձ՝ այս միտքը թափանծել տալ այս ժողովում՝ եղող
ամէն մի հեզ քրիստոնէի հոգւոյն մէջ. որքան ցանկալի էր ինձ
հասկացնել նրան, որ կատարելով այս իրան աչքում մանր
երեւացած խորհուրդը և կատարելով յատկապէս ի փառս Աս-
տուծոյ, — այն ժամանակ միայն նա կրմբունէր կեանքը իւր՝
ուելի գաղափարական բարձր մտքովը: Ա՛հ, եղբայր իմ. շատ
կարելի է, որ տեսնելով արարչագործութեան այս ամբողջ
և ընդարձակ տարածութիւնը, ուր ինչպէս Յաւիտենականի
պալատում, քո տեղը, ուրիշների համեմատութեամբ, այն-
քան անյայտ է և փոքր, դու շատ անգամ ինքդ քեզ հարցրել
ես՝ «արդեօք Յաւիտենականը գիտէ՞ ինձ և ճանաչում է»: —
Այո՛, եղբայր, նա ձեզ գիտէ և ճանաչում է աւելի լաւ քան
աշխարհիս հղօրներին, որոնք իրանց մեծութեամբ շլացնում
են աշխարհս, բայց և որոնք գործում են միմիայն փառասո-
խութիւնից գրգուած, որովհետև նրանց աշխատանաց կամ
ձգտման նպատակը Աստուած չէ: Նա ձեզ գիտէ և սիրում է:
Նա ձեզ գնահատում և ոգևորում է ձեր մղումների, ձեր
ջանքերի և ձեր զոհողութիւնների մէջ: — Եւ դուք երջանիկ
էք, որովհետև բաց ի աշխարհից, բաց ի աշխարհիս հղօրնե-
րից, — հնազանդում էք բոլոր հղօրների Ամենահղօրին, բոլոր
տէրերի Տիրոջ:

Բայց ձեր հնազանդութեան միակ պատճառը դա չէ: Դուք
քրիստոնեայ էք, բայց ի՞նչ է նշանակում Յիսուս Քրիստոսով
փրկուած քրիստոնեայ: «Փրկուած» բառը այստեղ դուք վեր
տաէք իւր ամենահասարակ և, մի և նոյն ժամանակ, իւր գըլ-
խաւոր նշանակութեամբ: Աստուած ձեզ փրկեց, դուք յան-
ցաւոր էիք, դատապարտուած և Աստուծուց հեռացած: Բայց
Դուք հաւատում էք, որ ձեզ ձեր այս զարհուրելի վիճակից

արգանելու համար, տասն և ութն դար առաջ, անչափ սիրոյ և մարգասիրութեան գործը կատարուեցաւ: Դուք հոււատում էք, որ Աստուածորդին ձեզ համար՝ մարմին զգեցաւ, ձեզ համար ամէն տեսակ փորձութիւններէ փարաւ՝ մարդկութեան ամէն վշտերն ու նեղութիւնները կրեց՝ մինչև իսկ դատապարտութեան, խաչի և մահու մատնեցաւ: Դուք հոււատում էք, որ այդքան սիրոյ և զոհաբերութեան նպատակը դուք էիք, և թէ՛ Քրիստոսի արիւնը միմիայն ձեզ արդարացնելու համար թափուեցաւ: Յիսուս Քրիստոսի ձեռածք փրկուած գոյով՝ դուք այլ ևս ձերը չէք, այլ սեփհականութիւն էք Ատուածոյ:—Թող ինքնասէր և հաշտով մարդիկը խաչի պատուանդանին մօտենան և տեսնեն, որ այդ խաչի վրայ միմիայն թողութեան բառեր գրուած չեն. այլ նաև հնազանդութեան: Ամէն ոք, որ զգացուած խղճով մերձենում է խաչին, այնտեղ կգտնի մի սրբազան, հոգևոր և ամենավսեմ օրէնք, — օրէնք հնազանդութեան: Ամէն բան Աւետարանում քրիստոնէին ի հնազանդութիւն է հրաւիրում:— «Հնազանդիր, ասում է նրան խիղճը: «Հնազանդիր, ասում է նրան Աստուածորդւոյն կերպարանքը— նրան, որ մարմնացաւ, չարչարուեցաւ և իւր չարչարանքով հնազանդութիւն քարոզեց և սուրբեցրեց: «Հնազանդիր, ասում է նրան— քրիստոնէին— այն սուրբ զոհը, որ նրա համար ի խաչ բարձրացաւ: «Հնազանդիր, ասում է նրան իւր հերթում, Աստուածային մշտական և անօտհաճ ողորմածութիւնը, որ նա վայելում է ցարդ: Եղբարք, եթէ որ խաչի պատուանդանի մօտ դուք հնազանդութեան չսուրբեցաք, հապա էլ ուրիշ ի՞նչ պէտք է անէք: Հապա էլ ի՞նչ է հաւատը, եթէ որ նա միմիայն խօսքով է լինում: Ո՛հ, զարհուրելի միտք, Աւետարանը առայ՝ «հաւատաւ և կեցցէ»: Բայց կարելի է հաւատալ և կորնչիլ:— Այսպէս ուրիմն, հնազանդելու մենք պարտական ենք:

Ի՞նչ կերպ մենք պէտք է հնազանդ ինք. — ոյս է ահա մեր զբաղելիք երկրորդ հարցը:— Եղբարք, երեք տեսակ հնազանդութիւն կայ՝ հնազանդութիւն շահի կամ օգտի պատճառաւ, երկրորդի պատճառաւ և սիրոյ պատճառաւ, կամ ուրիշ խօս-

քերով՝ հնազանդութիւն շահատէրի, ստրկի և որդւոյ: Եւ քարդէն գիտէք թէ Ս. Աւարեալը ի՞նչ տեսակ հնազանդութիւն է պահանջում ձեզանից: Ի վերայ այսր ամենայնի ես հարկաւոր եմ համարում միւս երկու տեսակ հնազանդութեանց մասին ևս խօսել, որովհետեւ շահատէրները և ստրուկներ ամեն տեղ կան: Եւ ո՞վ կարող է ինձ երաշխաւորել որ այստեղ ձեր մէջ ևս չկան:

Քրիստոնէական հնազանդութիւնը շատ անգամ շահասիրի հնազանդութեան հետ շփոթել են, — նրան որ վարձի ակնկալութեամբ է կատարում իւր պարտքերը: Բայց սրբան հակասակութիւն կայ շահատէր մարդու հնազանդութեան շարժառիթի և Աւետարանի քարոզած հնազանդութեան մէջ: Շահատէր մարդը այսպէս է դատում՝ այս կամ այն գործը, այս կամ այն պարտականութիւնները ես կը կատարեմ, որպէս զի երկնքում վարձի արժանանամ և յուստեան երջանիկ լինիմ: Այժմ ես ձեզ հարցնում եմ՝ մի՞թէ այսպիսի մարդը պատրա՞նտ է երկնքի արքայութեան համար: — Ո՛չ, եղբարք, երկնքի երջանկութիւնը ոչ փողով է ձեռք բերուում, ո՛չ էլ միայն արտաքին զահարութիւններով: Երկնքը սիրող սրտերի բաժինն է: Մինչև անգամ ի՞նչ նշանակութիւն ունի՞ եթէ որ մարդ իւր բոլոր հարստութիւնը աղքատներին տայ, բայց իւր կրծքում՝ չունենայ սիրտ, որ իւր ընկերի, և ի դէմս նրան՝ Աստուծոյ, սիրով չբարակէ: — Ո՛րքան տխուր տեսարան է ներկայացնում ունայնասիրութեամբ մաշուած այն հոգին, որ Աստուծուն սիրելու անընդունակ է: Ըսկ Նորանից սարսելու ընդունակ: — Այն մարդը, որ իւր քառասուն կամ յիսուն տարուայ անհնազանդութիւնը՝ աշխատում է անագան փրկելութիւններով ջնջել, — աւելի է ծանրացնում իւր յանցանքները. ամենաչնչին բաները նանրաշաւտա երկիւղածութեան հետ է խառնում նա և, այսպէս, վարուելով Աստուծոյ առաջ, որին նա չէ կարող սիրել, աշխատում է ձեռք բերել երկնքը, իւր դատապարտութեան վճիռը ինքն իւր վրայ կրելով: Ո՛չ, երկնքի արքայութիւնը շահատէրների համար չէ: Աստուած այնպիսի հնազանդութիւն չէ կամենում, որոյ զվստար և

Թագուն նստաւոր անձնական շահն է :

Ի ուր, եղբարք, այդ տեսակ փորձութիւնից ի հարկէ՝ ձեզ շատ հեռի էք համարում : Յիսուս Քրիստոսի ձեռքով փրկուած՝ դուք ձեր թողութիւնը նրա ողորմածութեան վրայ էք դնում : Եւ ի հարկէ վերին աստիճանի կը զարմանայիք, եթէ որ ձեզ ասէին թէ ձեր սրտումն ևս շահասիրութեան մնացորդ կայ :

Ո՛հ, ես շատերին եմ տեսել, որ շահասիրական մտքից հեռի են եղել այնքան ժամանակ, մինչև որ իրանց կեանքում յանկարծական մի վիշտ է տեղի ունեցել և փորձութեան անընդհատ հարուածները իրանց գլխին են եկել : Այդ տեսակ սրտերում, որոնք առաջ մտն էին Աստուծոյ, այն ժամանակ մենք ի՞նչ ենք տեսնում : Այն ժամանակ մենք ի՞նչ ենք լսում այն շրթունքներից, որոնք առաջ միմիայն Աստուծուն էին փառաբանում : Եթէ ոչ յայտնի ցատումն և զայրոյթ, գոնէ տրտունջ կամ, առ նուազն, յուսահատութեան, վհատութեան և անզօրութեան դառը գիտակցութիւն :

Այս սրտունջն ու գոգոհութիւնը արդեօք սխալ հաշուից չէ՞ առաջ գալիս : Նրանք պատրաստ էին յօժարութեամբ Աստուծուն ծառայել, միայն այն պայմանաւ, որ երջանիկ լինին՝ նման այն հրէաներին, որոնք Քրիստոսի քամակից գնում էին, որպէս զի նա իրանց կերակրէ : Երբ երջանկութիւնը անց է կեցնում, նրանք զրգուում և բողոքում են : Ուրիշ ի՞նչ անուն տալ այս բանին, եթէ ոչ շահասիրական ոգի : Ուրիշ ի՞նչ համարել այս յայտը, եթէ ոչ սոսկ ծառայի ակնկալութիւն, որ իւր պարտականութիւնները կատարելով՝ նպաստում է իւր վարձը ստանալ : Այս հայեացքը օձի նման սողում մտնում է որտի ամենաթագուն տեղերն անգամ : Թող ասենք ձեզանից քննէ իրան թէ արդեօք այդ տեսակ օձեր նա իւր կրծքում չէ՞ ունեցել ու ջեռուցել :

Ի այց եթէ քրիստոնեան վարձ ստանալու ակնկալութեամբ չէ հնազանդում, — այնու ամենայնիւ մենք պէտք է հաւատանք, որ քրիստոնէական հնազանդութեան հետ վարձատրութիւնը կից է : Այս մասին Աւետարանը այնքան պարզ և յայտնի կերպով է վկայում, որ ոչինչ տարակուսանաց տեղիք

չէ մնում: Յիսուս Քրիստոս մեզ երբէք զօհողութեան չէ հրաւիրում, առանց ցոյց տալու, մի և նոյն ժամանակ, եւ վարձատրութիւն առ այդ: Նրա բոլոր վարդապետութիւնը, այս առարկայի վերաբերութեամբ, յանդում է այն բառերում, որով սկսուեցաւ Նրա լեռան վրայ խօսած քարոզը. «Եւրանի» «Գառարաց»: Ագացողները զօհ են բերում, զրա վարձը՝ երջանկութիւնն է:

Այն, ունենալով ճշմարիտ Աստուած՝ մենք մեր բոլոր վրձտերի մէջ արդէն ունինք մեր վարձատրութիւնը և ընդ նմին, ակնկալում ենք հատուցման մեծագոյն օրուան: Այստեղ, այս աշխարհիս մէջն էլ կան թէև անտեսանելի բայց խորին ուրախութիւնք, ինչպէս որ խորին է սէրն Աստուած: Եթէ որ դուք այդ ուրախութիւնը չունիք, ուրեմն ձեր հնազանդութիւնը կատարեալ չէ: Հարցրէք այդ ուրախութիւնքը ունեցող մարդկանց, ոչ նրանց, որոց բաղդաւոր կեանքը փորձութեանց բովիցը երբէք չէ անցել, այլ նրանց, որոց ճնշուած գոյութիւնը անագորոյն բազդի ձեռքում կարծես հազարաւոր անգամ խաղայիք է դարձել: Վերջին կարգի մարդիկը ձեզ կը հաւատարիացնեն որ հնազանդութիւնը, այն իւր վարձը իրան հետ է բերում: Եւ թէ, ըստ Ս. Առաքելոյն Պողոսի, ամենատեսակ թշուառութեան և վշտի մէջ անգամ կարելի է ուրախութիւն և մխիթարութիւն գտնել:

Բայց եթէ շահասիրի հնազանդութիւնը Աստուծոյ հաճելի չէ, — Նրան հաճելի չէ նմոնապէս և ստրկական հնազանդութիւնը: Նրկիւզի թելադրութեամբ, առանց գիտակցութեան և առանց սիրոյ հնազանդութիւնը նոյնպէս արժէք չունի Աստուծոյ առաջ: Ստրկակա՛ն հնազանդութիւն՝ սրբան դիւրին էր ձեռք բերել, եթէ սր Աստուած կամենար պատառել երկինքը, կայծակով և որոտմունքներով լեցնել աիեզերքը — և ընջել անհնազանդներին՝ սարսափով պատելով նրանց: Ո՞վ կարող էր այն ժամանակ հակառակել Նրան, Ո՞ր անխելք տրարածը կը յանդգնէր այն ժամանակ՝ բաց պատերազմ հրատարակել Ամենակարողի դէմ, որոյ մի խօսքն անգամ յաւիտեանական թշուառութեան մէջ կը գլորէր այնպիսոյն: Իրան հակառա-

կող կառնները Աստուած կարող է հնազանդացնել իւր ոյժին և իշխանութեանը, բայց նա այդ չէ կամենում և չէ անում: Ի՞նչ նշանակութիւն կունենային այն ժամանակ բոլոր յայտնութիւնները, որոնցմով Աստուած ազատական հնազանդութեան է հրաւիրում իւր արարածներին: Մի հին բանաստեղծ մի հոյակապ պոստիկերի վրայ ներկայացրել է, որ ուկրանոսի անդուհները տատանեցնող մորիկների նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ—ջրի յորձանքներում մարգարիտներ առաջացնել: Արա համեմատ կարելի է հաստատել, որ Ա. Գրքի մէջ նկարագրուած՝ նախախնամութեան բոլոր որոշումները, բոլոր սպառնալիքները, բոլոր հատուցում ու փորձութիւնները՝ ուրիշ ոչ մի նպատակ չունին, եթէ ոչ մարդուս—Աստուածային սիրոյ այդ յաղթանակի— լիուրի կատարելագործութիւնը: Կամ ուրիշ խօսքերով՝ կատարելագործումն այնպիսի հագուոյ, որ ազատական ինքնիրան Աստուծոյ նուիրէ: Եւ, յիրաւի, Աւետարանը իսկապէս ի՞նչ է, եթէ ոչ մի յաղթական և սրտաշարժ հրաւէր՝ մեր ազատութեան համար ուղղեալ: Խաչի վրայ միթէ մենք չե՞նք կարգում այս խօսքերը՝ «այ մարդ» տես ահա թէ ես քեզ համար ի՞նչ արի, հապա դու ի՞նչ արիր ինձ համար: Առանց վարանման տոնիք, եղբարք, որ խաչի հանդէպ ստրկական հնազանդութիւնը՝ նախատինք է և հայհոյութիւն:

Ի վերայ այս ամենայնի ո՞վ չգիտէ, որ հնազանդութեան գաղափարը շատ անգամ համարեցին այն կրաւորական դրութիւնը՝ որոյ մէջ մարդուն ստիպեցին գործել՝ որպէս ուրիշի ձեռքով կառավարվող մի մեքենայ: Այդ տեսակ կոյր հնազանդութեան գործողութիւնը ներքողում են՝ ցոյց տալով դրանից առաջացած նշանաւոր հետեանքները: Բայց ես ձեզ խորին համոզմամբ ասում եմ՝ որ այդ ոյժը ընդունող և ունեցող մարդուն տեսնելիս՝ ես դողում եմ, թէ կուղ նա այդ ոյժը ամենալաւ նպատակի համար գործագրուած լինի: Դողում եմ, վասն զի Աւետարանի վարդապետութիւնը հակառակ է ստրկական կամ կրաւորական հնազանդութեան: Դուք ինձ ցոյց էք տալիս կոյր հնազանդութեան ահագին զօրութիւնը, որ բարի գործի համար է գործագրուած: Բայց դուք

մտաւնում էք, որ նոյն պիտի և մի և նոյն դօրութեամբ, կարելի է և գէտի չարք գործածել մինչև անգամ առանց խղճահարութեան, որովհետև կոյր հնազանդների արած գործոց պատասխանատուութիւնը՝ իրանց վրայ չէ՛ բնկնում, այլ հրամայողների վրայ: Եթէ այժմ մենք տեսնում ենք կոյր հնազանդութեան այնպիսի արդիւնքները, որ մեր յարգանացն արժանի են,—գա նրանիցն է, որ այդ հնազանդութիւնը՝ լուսաւորութեան, ինքնուրացութեան և ողորմածասիրութեան ներգործութեամբ՝ հագեցան պիտի լինեն և կամաւոր հնազանդութեան է վերածում: Բայց ամեն ժամանակ և ամեն մի երկրում, ուր վերոյիշեալ գործողութիւնը տեղի չէ ունեցել, կոյր հնազանդութիւնը մի այսպիսի ահեղ պիտի լինի, որ անպատային լուութեան և գերեզմանային խաղաղութիւն է սիրելի մի միայն: Այս հիման վրայ, եղբարք, ինչ եռանդով որ շահասիրական հնազանդութիւնը մենք դատապարտեցինք: մի և նոյն կերպով դատապարտում ենք և չենք կարող արդարացնել եւ այն հնազանդութիւնը, որ երկիւղի կամ մահուան աղբեղութեամբ է լինում:

Աստուած ուղումէ, ասացինք մենք, որ շահասէրներն ու ստրուկները չլինին իւր ծառայողները:—Հպարտ մի պէտք է լինի: Առ այդ առաքեալը պատասխանում է՝—«բէ!»: Այս հասարակ բառը՝ շատ խորն է և սքանչելի: Նա իւր մէջ բովանդակում է այն ամենը, ինչ որ մեզ զբաղեցնում է, այսինքն կատարելապէս կախումն ունենալ Աստուծուց, սուրբ երկիւղածութիւն և անկեղծ սէր: Այդ բառը մեզ յիշեցնում է այն, որ մենք պարտաւոր ենք հնազանդիլ և հեռացնում է մեզնից այն ամեն շահասիրական և ստրկական դիտումները, որոնք կարող են խառնուել մեր հնազանդութեան հետ:—Որքե՛ք Աստուծոյ: այս փառաւոր և ազնիւ կոչումը մենք կորցրինք, և եթէ այժմ նորից ստանձնեցինք,—գա մի միայն ի շնորհս Աստուծային անճառելի ողորմածութեանն է: Այդ կոչումը մեր միտքն է բերում այն ամենը, ինչ որ վսեմ է և սրտաշարժ Աւետարանի մէջ: Ո՛վ դուք, որ Աստուծուն ձեզ Հայր էք անուանում, դուք որ—ինչպէս ես կամենում եմ հաւատալ,—

շահասիրական հաշիւներն ու ստրկական երկիւղը ձեզանից այդքան հեռացնում էք, — դուք, որդիք Աստուծոյ, գիտէք արդեօք հնազանդիլ:

Հնազանդիլ, բայց նախ քան մեր խօսքը առաջ տանելը՝ ինքս ինձ հարցնում եմ՝ արդեօք մենք ամենքս հասկանում ենք այս խօսքի նշանակութիւնը: Այս խօսքով մենք, գրեթէ միշտ, գործողութիւն ենք հասկանում: Սակայն գործողութիւնը հնազանդութեան մի մասն է միմիայն, մինչդեռ նորա երկրորդ մասը, որ մարդկանց մեծագոյն մասին յատուկ է և որը ամենքի համար էլ դժուարագոյնն է, — հոգեկան տանջանքն է: Մենք այսպէս ենք կարծում. որ գործելով միայն կարող ենք Աստուծոյն ծառայել: Այսպէս ման գալ, խօսել, աշխատել, դրանք հնազանդութեան եղանակը պարունակող գործողութիւններ են: Բայց ակնկալել՝ մնալով անգործ և տանջուիլ, սա մեր կարծիքով, նշանակում է կեանքը սպանել: Մարդկային նիւթական խելքի կոպիտ մնորութիւն, որ մի միայն այն բանին է նշանակութիւն տալիս՝ ինչ որ տեսնում է և ինչ որ ծանրանում է իւր վրայ, կարծես թէ՛ այն ներքին աշխատութիւնը, որ մեր հոգու մէջն է տեղի ունենում, աւելի քիչ արժէք ունի քան մեր ձեռքերի արած աշխատանաց գումարը, քան մեր սուքերի ընթացած տարածութիւնը, քան մեր շրթուկների արտասանած բառերի թիւը, նղբարք հոգեպէս տանջուելով մարդիկ նոյնպէս ծառայում են Աստուծուն, ինչպէս և գործելով:

Քրիստոնէական կեանքը շատ անգամ սրբազան պատերազմի են նմանեցնում: Վճռական կամ մեծ պատերազմի ժամանակ զօրաբանակի բոլոր մասերն էլ մի և նոյն գործը չեն կատարում: Այսպէս՝ հրք բանակի մի մասը, թշնամու վրայ յարձակուելով, ակնյայտնի կերպով, երևան է հանում իւր վառաւոր արիւնթիւնը սուսերամարտում, — միւս մասը կամ ամբողջ վաշտեր՝ երկար ժամերի ընթացքում տեղացող մահաբեր թնդանօթների հանդէպ պէտք է սպասեն: Անշարժ, զէն ի ձեռին, նրանք տեսնում են թշնամու գնտակները, որ իրանց խմբի մէջ արիւնուռչտ կոտորածներ է անում, և իրիկնապահին, լքեալ, տանջեալ դաժան կրակից, որին նրանք չէին կարող պատասխանել, ձեռք բե-

բուած յաղթութիւնից յետոյ, նրանք իրանց հետ չեն տանում յաղթութեան փառաւոր աւար ու դավինիները և նրանց անուըը չի լսվում յաղթութիւնը շնորհաւորող ամբողի աղապակներէ մէջ: Ի վերայ այս ամենայնի, ո՞վ կը համարձակի ասել, որ այդ վաշտերի գործը թեթեւ և աննշան գործ էր: Այդ գործը աննշան է կարծիւում այն պատճառաւ, որովհետեւ այդ փառագուրի գործի համար կարգապահութեան աւելի ընդունակ և աւելի պնտասիրտներն են նշանակվում: Երիտասարդ մարդիկներէց, այն, կարելի է յափշտակիչ ոգևորութիւն և անյաղթելի եռանդ սպասել, որ թշնամւոյն բաղխելու համար հարկաւոր է, քայց միմիայն հինաւուրց և փորձառու զինաւորներն ունին այն խաղաղ և հաստատուն անվեհերատութիւնը, որ գիտեառնասրտութեամբ արհամարհել անակնունելի մահը: Կեանքի պատերազմի մէջ՝ մի և նոյն բանն է լինում: — Ոմանց Աստուած կարգում է մօտիկ տեղերում աղմկալից պատերազմի հրաւիրելով նրանց, մինչդեռ այլոց հրամայում է սպասել ու լռութեամբ և, ըստ երեւոյթին, անգործութեամբ տանջուիլ, նահատակուիլ՝ հոգեպէս: Բայց թէ առաջինները և թէ երկրորդները նստասում են յաղթութեան՝ հաւասարաշափ ծառայելով Աստուածային նախորոշմանց: Եւ այսպէս՝ դժբ, եղբարք, դժբ՝ որ Աստուծոյ ձեռքով այս և այն գործին էք նշանակուած, — գիտէք արդեօք դուք հնազանդիլ:

Ես այստեղ ուղղապէս կասեմ իմ կարծիքը: Հնազանդութիւնը մի այնպիսի առաքինութիւն է, որ այժմեան ժամանակումն աւելի քան երբ և իցէ՝ պակասում է մեզ: Առհասարակ ես չեմ սիրում այն մթին և ընդհանուր խօսքերն, որոնցմով մեր ժամանակի տխուրներն ու թուլութիւնները են նկարագրվում: Բայց, կարծեօք, ես ինքս էլ թուլութեանց մէջ ընկած չեմ՝ լինիլ, եթէ որ ասեմ թէ՛ մեր ամենապակասաւոր կողմը, — սլարտականութեան զգացման մեր մէջ սաստիկ թուլանալն է: Ստրկական հնազանդութիւն բաւականին շատ կայ, այնքան շատ, որ երբեմն մեզ վրդովում է: Բայց սլարտականութեան ազատ հնազանդութիւն, հնազանդութիւն Աստուածային կամաց, — աւասիկ թէ մեր բանն է մեզ պակասում: Եւ

ինչպէս չպակասի, երբ ժամանակիս առաւել լուրջ կարծուած գլուխներն՝ յանդգնում են պնդել, որ Աստուածութեան գաղափարը՝ մարդկութեան ազատ զարգացմանը ամենազօրեղ խոչընդոտ է դարձել իւր: Այս է ահա ժամանակիս շուռչը: — Եթէ որ դրան աւելացնենք և այն մարդկանց, որոնց համար ապստամբութիւնը մի շատ խորհրդաւոր և գրաւիչ հրապուրանք է, այն ժամանակ դուք ինքեանքդ գատեցէք, թէ փորձութիւնը սրբան բարբալում է: Եղբարք, սարսափելի բռպէներ կան, երբ գոռոզ անկախութիւնը, անսովոր ուժով, զարթում է մեր մէջ: Եւ այն ժամանակ մեր հոգու մէջ ամեն բան տրամագրւում է գէպի հակառակութիւն առ Աստուած: Երեւակակայութիւնը սկսում է վանազան ցնորքների մէջ յաճել՝ միշտ խաբուսանքների հետեւելով: Կիրքը բորբոքւում է ինչպէս մի կենդանու, որ իւր սնունդն է պահանջում: Խելքը անսահման կերպով իշխել է ուղւում և կամքը բաց ի իրանից՝ ուրիշ ոչ ոքին չէ ուզում ճանաչել: Գոռ պատերազմի գոռոջ բռպէներ, ո՛վ արդեօք քեզ չէ ունեցել: Այն ժամանակ մեր գոռոզութեան խորքերից առ Աստուած մի այնպիսի արտուանջ է բարձրանում, որին շրթունքներով չէ կարելի անուանել:

Շատ սակաւ է պատահում, եղբարք, որ մարդիկ յայտնի կերպով ապստամբին: Յաճախակի մենք ուրիշ կերպ ենք վարուում, այսինքն՝ մեր վրայ դրուած պարտականութեանց թիւը՝ մենք առ երեւոյթս միայն ստանձնում ենք, Աստուծուն ծառայելու համար՝ միմիայն թեթեւ միջոցները ընտրելով: Աստուծուն ծառայել ցանկացող շատ քրիստոնեաներ կան, միայն թէ այդ ծառայութիւնը կամայականաբար լինի: Այդպիսիք իրանց էական պարտականութիւնները՝ երեւակական պարտականութեանց են զոհում: Շատ քրիստոնեաներ էլ կան, որոնք Աստուծոյ կամայ պատրուակին տակ՝ սակ իրանց խելքով ու հասկացողութեամբն են տարւում: Գրանք իրանց գրելու մի անգամ հաստատուած ծրագրին են հետևում մեծ յամառութեամբ: Եւ իրանց վարմունքը արդարացնելու համար՝ Աստուծոյ կամքի վրայ մատնանիշ են լինում՝ միշտ Աստուծոյ կամքը, — շատ յարմար բառ, որ յաճախ գործ է ածուում մարդ-

կանց քմուհաճութիւնները արդարացնելու համար, և որ շատերի ժպիտը միայն կարող է շարժել: Եղբարք, զգուշանանք այդպիսի բառերի գործածութիւնից: Եւ դրանց առթիւ, մեր սովորական խօսակցութիւններում, աւելի չափաւոր լինինք: Մեր երեւակայութեան մեզ տուած խորհուրդները և մեր խորամանկ սրտի թելադրութիւնքը՝ չընդունենք իբրև Աստուածային կամաց թելադրութիւնք: Ի հակառակ դէպս, մենք մեզ խաբելով, սրբութիւնը անարգած կըլինինք: Ի՞նչ անարգ տեսարան է ներկայացնում այն քրիստոնեան, որ հնազանդութեան միայն կեղևը, կաշին է կրում իւր վրայ, մինչդեռ իւր սրտի խորքում արհամարհում, սոճնակոխ է անում աւելի կարևոր, աւելի աշխարայ և ընական պարտաւորութիւնները: Խղճմտանքի ձայնը խեղդելու համար՝ այդպիսի քրիստոնեան, յաճախակի իւր արասքին ջերմեռանդութիւնն է կրկնապատկում: Նրա աշխոյժը բարձրագոյն զաղաղակների մէջ է միայն երևում. ճառերով և ճամարտակութիւններով միայն նա ուզում է հաւատարմացնել իւր աստուածասիրութիւնը: Եւ այսպիսով՝ Յաւիտեանականին Աստուծոյ անունը՝ ամբարն շուտ կրկնվում է նրա շրթունքներում, սրբան Աստուծոյ կամքը հեռի է և բացակայ նրա հոգուցը: Սիրտս կծկվում է, եղբարք, երբ տեսնում եմ, որ այդ բանը ամբարն յաճախ է պատահում: Բայց սիրոյ գործողութիւնը միթէ անդ է լինելու: Սիրող սիրտը միթէ կը համարձակվի խաբել Աստուծոն աւերիստ հաւատարմութեամբ: Եղբարք, ձեր խիղճը Աստուծոյ ձայնն է: Եւ ես չեմ կարծում, որ նա լռէ: Ուստի՝ լսեցէք այդ ձայնին: Առանց նրան՝ հնազանդութեան խօսքը չարտասանէք: Զգուշացէք չնմանուիլ Աւետարանի առակում յիշուած այն որդւոյն, որ հօրը ասաց թէ «գնում եմ այգի», բայց չգնաց: Զգուշացէք, որ մաքսաւորներն ու մեղաւորները քան զձեզ չյառաջեն երկնքի արքայութեան մէջ:

Մի, և վերջին, գայթակղութիւն էլ կայ, եղբարք, որ ձեզ պէտք է յիշեցնեմ: Ես նրան առաւել վստահաւոր եմ համարում՝ այն պատճառաւ, որ մեր գոռոզութիւնից կամ մեր քնածին խորամանկութիւնից չէ ծագում նա: Այլ աւելի պարզ

և անկեղծ մարդկանց յատուկ է: Ստրկական հնազանդութեան մասին խօսելիս՝ մենք հիմք ունեցանք պնդելու, որ հնազանդութիւնը ներքին և կամուսոր պէտք է լինի, որ ամէն գործողութիւն, որը սիրոյ ազատ շարժումից չէ յառաջանում, Աստուծոյ առաջ գին չունի: Բայց ահա ձեզ մի դէպք, որ սրանից է ծագում: Երբ Աստուած մեզ ի հնազանդութիւն է հրաւիրում, մենք սպասում ենք, որ մեր ներսից մի շարժում մղէ դէպ ի այն: Իսկ երբ այդ շարժումը տեղի չէ ունենում, մենք հրաժարվում ենք հնազանդելուց: Այն առնենք օրինակներ իրական կեանքից: Աստուած մեզ պատուիրել է աղօթել: Մեր սիրտը անտարբեր է. ուստի և ասում ենք՝ մեր աղօթելը անօգուտ է, ուրեմն շարժէ աղօթել: Եւ մենք չենք շարժում: Իբրև հաւաստիք մեր հաւատին՝ Աստուած բարի գործեր է պահանջում մեզանից: Բայց մեր սիրտը Աստուածային ոյժը չէ զգում: Ուստի և մենք չենք կատարում այդպիսի գործեր: Մենք մնում ենք մի միայն հաւատով, որ, ըստ առաքելոյն, «մեռեալ» է: Ահաւասիկ, եղբարք, թէ ինչո՞ւմ է մեր վատագուր գլորման վէժը միզ համար, որ լաւ գիտենք թէ ստրկական հնազանդութիւնը Աստուծոյ առաջ գին չունի: Ես վստահանում եմ պնդել, որ շատ քրիստոնէականներին՝ լի սեփով և եռանդով կեանքը խորտակուած է այս վէժի վրայ: Մեր սիրտը, անտարակոյս, միշտ պատրաստ պէտք է լինէր սիրով և յօժարութեամբ կատարել Աստուծոյ կամքը: Բայց դուք շատ լաւ գիտէք, որ այդպէս չէ լինում: Այսպիսի բոպէներում արդեօք ի՞նչ պիտի անել: Միթէ անգործ մնալ, — Աստուած հեռի արասցէ: Եղբարք, պէտք է հնազանդիլ՝ հնազանդիլ խոնարհութեամբ և կատարեալ հնազանդութեամբ կամացն Աստուծոյ: Պէտք է ամեն ժամանակ հնազանդիլ՝ թէ՛ փորձութեան և թէ՛ օրհնութեան ժամանակ: Հնազանդիլ արտասուօք, եթէ որ դուք անկարող էք ուրախութեամբ հնազանդիլ: Հնազանդիլ թուլացեալ սրտով, եթէ եռանդն ու ձգտումը ձեզ պակասում են: Եւ ո՞վ կարող է ասել, որ այդ տեսակի սկզբում՝ կրաւորական և ակամայ, հնազանդութիւնը՝ վերջերում Աստուծոյ օգնութեամբ, չէ փոխարկուելու կամուսոր և յօժարակամ հնազանդութեան:

Եթէ որ սէրը հնազանդութեան աղբիւրն է՝ միթէ չէ՞ կարելի
 ասել, որ հնազանդութիւնն էլ սիրոյ աղբիւրն է: Եւ թէ՛ մենք
 մօտենում հնք Աստուծոյ մեր նրան մատուցած զոհերի շնոր-
 հիւ: Փորձը ձեզ հաստատում է այս: — Քանիցս անգամ դուք
 այս և այն զոհաբերութիւնն էք արել տատանմամբ և թագուն
 դժկամակութեամբ, բայց յետոյ շնորհակալութեան արտա-
 սուներներ են թափուել ձեր աչքերից: Քանիցս անգամ դուք
 սկսել էք աղօթել՝ կրկինելոյ ձեր, ժայռից էլ կարծր սրտին ան-
 համապատասխան բառեր: Եւ սակայն ինչպէս որ ժայռից, մար-
 գարէի գաւազանի հարուածոց շնորհիւ, դուրս ցայտեց ջուրը,
 այսպէս էլ ձեր աղօթքից յետոյ՝ դուք ձեր սրտի մէջ մի տեսակ
 հանգստութիւն էք զգում: Քանիցս անգամ՝ դանդաղաբայլ և
 կծկած որսոյ՝ դուք դիմել էք դէպի տնանկի կամ ցաւագարի
 խրճիթը՝ թերևս պատրաստ լինելոյ հէնց առաջին խօշընդո-
 տում յետ դառնալու: Սակայն ոյժ ու կող անելով՝ մերձեցել
 էք այդ անանկին կամ ցաւագարին և սգի ու շունչ տուել
 նրա վշտաբեկ սրտին, զգացնել տուել նրան ձեր համակրու-
 թիւնը, որին նա այնքան կարօտ էր: Քանիցս անգամ բռնուե-
 լով մի յանկարծական գայթակղութեամբ, որին գիմադրելու
 համար ձեր սիրտը ոչ միայն անզօր էր, այլ սկզբում նա և հա-
 մակիր՝ դուք կոր ի գլուխ հիայած էք ամաչելով և խղճահար-
 ուելով այն մեղքից, որոյ գործերը ձեր վարանման և թուլու-
 թեան մի րսպէիցն էր կախուած: Բայց սակայն փոքր ինչ խոյս
 աւելով այդ գայթակղութիւնից դուք զգացիք, որ ազատուել
 էք մեղաագործութիւնից և այժմ՝ զզուանքով էք նայում այն
 բանի մրայ, որից հրապուրվում էիք առաջ: Ահա ձեզ հնազան-
 դութեան պտուղները: Ահա թէ՛ հնազանդութիւնը ինչե՛ր է
 անում, որ հնութեամբն Աստուծոյ: Քարձեալ մի, և վերջին
 խօսք: Եւ այս խօսքը ես ուղղում եմ այս ժողովականներից
 նրանց, որոնք ճշմարտութիւնը ձեռք բերած չեն, այլ միայն
 որոնում են: Եթէ որ նրանք ինձ հարցնեն թէ ի՞նչ եղանակաւ
 կարելի է կենդանի և ճշմարիտ հաւատ ձեռքբերել և հաստատ-
 ուել նորանում, ես, առանց վարանման, կը պատասխանեմ՝
 «հնազանդեցէք»: Հնազանդեցէք պարտքի, խղճի ձայնին, և

այդ ձայնը, սկզբում սառն և դաժան, հետզհետէ՝ ձեզ համար կը դառնայ փափուկ և համոզեցողիչ: Անա՛ կը դառնայ կենդանի ձայն և հենց այդ ձայնը Աստուծունն է: — Եթէ որ կամի զկամս նորս առնել՝ զխոսոցէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ իցէ արդեօք: (Յովհ: Ե. 17): Ինչքա՛ թերահաւատներ և կասկածամիտներ, հնազանդեցէք Աստուածային վարդապետութեան: որ մեզ աւանդեց Տէրն մեր Յիսուս Քրիստոս և որ Ս. Առաքեալք պարզեցին իրանց թղթերում, և այն ժամանակ դուք հաւատ կունինաք: Հնազանդեցէք ձեր մօրը՝ Ս. Եկեղեցւոյն և նրա աստուածային կանոններին, — և դուք կը հառուատուիք հաւասոյ մէջ, և ձեր հաւատը կենդանի և իրական կլինի: Իսկ մինչև այդ ժամանակ՝ եթէ դուք սկսէք շարունակ քննել, շարունակ, և ապարդիւն կերպով, որոնել ձեր քմահաճոյ և թռուցիկ տպաւորութիւններում՝ կշիւքի սլաքը, դէպ ի որը՝ այլ և այլ իրերամարտ հիմունքները մղում են ձեզ միշտ, — հաւատացած կացէք, որ այդ կշիւքը միայն այն ժամանակ դրական հաւատի կողմը կը թեքուի երբ դուք նրա մէջ ձգէք ձեր հնազանդութեան նժարը: — Այնպիսի կեանք վարեցէք, այնպիսի հաւատ ունեցէք, որ արդարութիւնը՝ սրբութիւնը և սէրը առ Աստուած՝ փստու է, իրականութիւն է: Եւ այն ժամանակ այդ բանը ձեզ համար մշտական հաւատ կը լինի ճշմարտութեան համար որքան որ շատ զոհ բերէք, այնքան նա ձեզ համար յորդի և զմահատելի կը լինի, ճշմարտութեան համար՝ ունայնութեան արուեստական փայլից հեռու կայէք, հրաժարուեցէք: Եւ այն ժամանակ դուք բաց աչքով կը տեսնէք նրա փայլուն, մաքուր և պարզ լոյսը, որ աւելի և աւելի կը գրաւէ ձեզ: Ճշմարտութեան համար՝ հրաժարուեցէք մարմնոյ կոպիտ բաւականութիւն ու հաճոյքներից, գոռոզութեան անմիտ և շնչին հրապոյրներից, ինքնասիրութեան մեղի ցնորքներից, — և այն ժամանակ նրանում (ճշմարտութիւնում) դուք կը գտնէք այն, որոյ մասին կտակածում էիք: Ո՛հ Աստուածային ճշմարտութիւն, դու ծածուկ ես մնում նրանցից, որոնք քո մէջ մի միայն իրանց հետաքրքրութեան սնունդ են որոնում և այդպիսեաց համար դու մի

անթափանցելի դադանիք ես դառնում, Իսկ նրանց, որոնք մի-
միայն քո ձայնդ լսել՝ և այդ ձայնին հեռուել են ուղում,
որոնք քեզ կանչում են՝ քեզ հնազանդելու նպատակաւ մի-
այն, — այդպիսեաց հանդէպ, ով Աստուածային ճշմարտութիւն,
դու բացուում, երևում ես քո բոլոր փառահեղութեամբ, և
Աստուածային գեղեցկութեամբ, և այն ժամանակ՝ քո՝ նրան-
ցից պահանջած ամենատեսակ զստուութիւնքը՝ օչինչ նշանա-
կութիւն չունին այն մաքուր, խորին և անտահման ուրախու-
թեան հանդէպ՝ որով լցնում ես դու նրանց սրտերը: Ամէն:

Թարգմ. ԵՂ.ԻՇԷ ԳԱԶ. ԳԵՂԱՄԵԱՆՅ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԱՋՆՆԵԿԱՆ ԴՍՍԵՐ:

Ծիսական ուսումնարանների նոր ծրագրի մէջ առաջին երեք բաժան-
մունքների համար իրազնական դասեր չեն նշանակուած որպէս մի առան-
ձին ուսմունք, այլ նոքա մտել են մայրենի լեզուի դասերի մէջ. իսկ չոր-
րորդ և հինգերորդ բաժանմունքների համար իրազնութիւնը առանձին
նշանակուել է բնագիտական դասերում: Բայց այդ անունը այնքան երկ-
դիմի է, որ դորա ստացած նշանակութիւնը մեծ շփոթութիւններ է առա-
ջացնում ուսուցիչների գաղափարներում և գործերում: Ով որ հասկա-
նում է իրազնական դասերի իսկական բնութիւնը, նա այնու իսկ բաւական
ապահոված է թէ գործնական մանկավարժութեան մեծամեծ սխալներից
զերծ կը մնայ: Մենք կը փորձենք Բէնի վարդապետութիւնը այդ խնդրի
մասին այս տեղ լիովին հազորդել, որ իւր սովորական հմտութեամբ միշտ
առաջնորդում է լաւ որոշել էականը անէականից և պայծառ կերպով
ցոյց է տալիս ամենայն յօգուածոյ հանգամանքի բոլոր մանրամասնու-
թիւնները — իւրաքանչիւրը իւր արժէքի համեմատ:

Իրազնութեան եղանակի մեծ կարևորութիւնը առաջին անգամ Պե-
տալոցցին ցոյց տուեց մանաւանդ թուաբանութեան համար, որ աշխա-
տում էր թուերի վերացական քանակութիւնները թանձրացեալ օրինակ-
ներով բացատրել: Իրազնական դասերի այս եղանակը շատ լաւ հասկա-
նալի է և միակ հիմք է կազմում ամենայն տեսակ վերացական ծանօ-